

born in 1894 in the town of Ordu (Turkey, Trabizon). In 1912 he graduated from the Perperian collage in Constantinople, in 1915-16 worked as a teacher in Bulgaria (town Shumle). In 1919-20 he studied in the he Lausanne, later, in 1920-25<sup>1</sup> on at the Faculty of Economy of Berlin University. He taught such distinguished scientists like Zombard and Markart.

In 1925 he was invited to homeland by the Government Soviet Armenia. He was the Decan of the faculty of history at Yerevan State University (1925-37), the Head of the Department of History of Armenian culture (1932-35), at the same time he was the director of the National Library (1927-29).

H. Zoryan was the member of "Nemesis" group, leaded by Shahan Natali.

It was he that told S. Tehleryan, that Taliat Pasha was in Berlin. In 1937 he was arrested on the "Professor's case" and was proud of his past in court.

In 1942 H. Zoryan died in exile.

After Stalin's death, he was posthumously acquitted.

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԱՐԴԻ ՓՈԽՎԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏՔՍՈՒՄ

Է. Լ. ԶՈՅՐԱԲՅԱՆ  
Պատմական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ դոցենտ

Հայաստան - Սփյուռք փոխհարաբերությունների կառուցման հայեցակարգում Սփյուռքի լինելիության և հայապահպանության գլխավոր առհավատչյան հզոր և անվտանգ Մայր հայրենիքն է: Այս աներկբա ճշմարտությունը մշտակագերակայություն է թե՝ Մայր հայրենիքում և թե՝, առավելապես, Սփյուռքում: Միանգամայն ճիշտ է նկատում Կ. Դալլարյանը, գրելով, - «Կենտրոնաձիգ ուժի՝ հայոց պետականության գոյությունն է բնորոշում արդի Սփյուռքի քաղաքական հատկանիշը: Ի տարբերություն նախորդ դարերի ցրոնքի՝ աշխարհով մեկ սփյուռքած հայությունն այսօր ունի իր քաղաքական հենարանը: Յետևաբար, արդի Սփյուռքն էլ իր հերթին հնարավորին չափ օժանդակում է հայոց պետականության ամրապնդմանը՝ հավաքական ազդեցություն գործադրելով իր բնակած երկրների ու Հայաստանի միջաեւտական հարաբերությունների բնականոն ընթացքի վրա, ինչպես նաև հայության համազգային խնդիրների նկատմամբ օտար տերությունների դիրքորոշման վրա»:<sup>1</sup>

Հայրենիք - Սփյուռք կապի ընկալման հիմքում դնելով միասնական հայրենիքի գաղափարը՝ երկուստեք ջանքեր են գործադրվել այդ կապերը ամրապնդելու և առարկայական դարձնելու իմաստով: Դրանք դրսկորվել են ի սկզբանե՝ թե՝ Հայաստանի առաջին Հանրապետության 1918-1920 թթ. կարճատև գոյության, թե՝ Խորհրդային իշխանության տարիներին՝ հայրենադարձության, Հայկական ընդհանուր բարեգործական միության (ՀԲԸՍ), Հայաստանի օգնության կոմիտե-

<sup>1</sup> Տե՛ս Կ. Դալլարյան, Հայ սփյուռքի պատմություն, Երևան, 2004, էջ 4:

ի (ՅՕԿ) գործունեության և մշակութային առնչությունների ճանապարհով, թե՝ առավելապես ետխորհրդային տարիներին անկախության վերականգնան և պետականության կառուցման շրջանում:

1918-1920 թթ., շուրջ երեք տարվա ընթացքում, ԴՅ տեղափոխվեցին այլ երկրներում ապրող ու աշխատող հազարավոր մտավորականներ, զինվորականներ, բժիշկներ, ազգային գործիչներ: Սփյուռքի մի շաբթ մեծահարուստներ նյութական իրենց մասնակցությունը բերեցին Հայաստանի առաջին Հանրապետության տնտեսության վերականգնան գործում: Այդպիսիք էին Եգիպտոսից մեծահարուստ Մելրոնյան եղբայրները, Բաքվից՝ Արշակ Շուխասյանը և ուրիշներ: 1920-1940թթ. Խորհրդային Հայաստան ներգաղթեցին 75.000 հայեր:<sup>2</sup> Այս փուլում Հայրենիք - Սփյուռք կապերի ամրապնդման, Սփյուռքի հայրենասիրական, մշակութային, բարեսիրական, հայրենակցական կազմակերպությունների, նշանավոր մտավորականների և հայրենական գործիչների հետ փոխառնչությունների հաստատման հարցով գրադարձում էին Հայկական ՍՍՀ ժողովների ներգաղթի հանձնաժողովը (1931թ.), ՅՕԿ-ը (1921-1937թթ.), ներգաղթի կոմիտեն (1931-1944թթ.) և Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակույթի կապի հայկական ընկերությունը (1944-1964թթ.):<sup>3</sup> Եթե Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին դեռևս շարունակվում էր Սփյուռքից տնտեսական աջակցությունը ՅՕԿ -ի միջոցով, ապա 1937թ. վերջինիս վերացումից հետո Հայաստան - Սփյուռք հարաբերությունները սահմանափակվեցին միայն կրթամշակութային կապերով: Չնայած դրան, Հայրենական մեծ պատերազմից հետո 1945-1990 թթ., նախորդ շրջանի համեմատ, աշխուժացած Հայաստան-Սփյուռք հարաբերությունները: 1946-1948 թթ. տեղի ունեցավ մեծ հայրենադարձությունը, որի ընթացքում մայր հայրենիք հայրենադարձվեցին սփյուռքահայերի նոր զանգվածներ: Միայն 1946-1947 թթ. հայրենադարձվածների թիվը կազմեց 86.373 մարդ: Այդ ժամանակաշրջանում բավականաչափ փոխվեցին նաև հայկական սփյուռքի աշխարհագրական սահմանները: Սառը պատերազմը, որն այս փուլում Հայաստանի և Սփյուռքի փոխսարաբերությունների ամրապնդման լուրջ խոչընդոտ էր, չկատեցրեց Հայրենիք-Սփյուռք կապերը այն պատճառով, որ ի տարբերություն խորհրդային ժողովուրդների, որոնք արտասահմանում ունեին վտարանդիներ՝ հիմնականում հակախորհրդային տրամադրություններով, ապա Հայկական Սփյուռքը գերազանցապես բարեկամական, հայրենասիրական դիրքորոշում ուներ խորհրդային Հայաստանի նկատմամբ: Պատահական չէ, որ խորհրդային կառավարությունը չէր խոչընդոտում, նույնիսկ խրախուսուն էր սփյուռքահայության հետ գիտական և մշակութային կապերը: Այդ նպատակով 1964 թ. ստեղծվեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե:<sup>4</sup>

Տակավին խորհրդային տարիներին, սառը պատերազմի հետևանքով, Հայրենիք-Սփյուռք փոխադարձ սահմանափակ հարաբերությունների արյունատար անօրեներին նոր սնուցում ու բովանդակային նոր լիցքեր հաղորդեցին 1980-ական թվականների կեսերից ԽՍՀՄ-ում ընթացող, վերակառուցմամբ պայմա-

<sup>2</sup> «Ուպի Արարատ» հայրենադարձության ազգային ծրագիրը՝ Հայաստանի զարգացման հիմնարար պայման, Եգերք մատենաշաղ, թիվ 1, Երևան, 2006, էջ 13:

<sup>3</sup> Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 216:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 281, գ. 409, գ. 29, թ. 1:

նավորված տեղաշարժերը: Ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրերից սփյուռքահայությունը իր բարոյական և նյութական աջակցությունը բերեց Հայաստանին և Ղարաբաղին: Մասնավորապես 1988 թ. ավերիչ երկրաշարժից հետո Սփյուռքը, այդ ցավը համարելով իրենը, զորավիգ եղավ Խորհրդային Հայաստանին, ամուր կանգնեց հայրենիքի կողքին: Գիտամշակութային, կրթական կապերի ընդլայնմանն ու ամրապնդմանը գուգահեռվեցին նաև վաղուց ընդհատված տնտեսական, սոցիալական հարաբերությունները, որը նոր փուլ նշանավորեց Հայաստան-Սփյուռք հարաբերություններում: Այդ շրջանում Հայրենիք-Սփյուռք սոցիալ-տնտեսական հարաբերությունները նորովի զարգացում ապրեցին:

1988թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժից հետո օտարերկրյա փրկարանների առաջին շարժերում Հայաստան ժամանեցին նաև բազմաթիվ սփյուռքահայեր Ֆրանսիայից, Ավստրիայից, Կանադայից ու այլ երկրներից և իրենց մասնակցությունը բերեցին մարդկանց փրկության գործին: Միայն 1989 թ. տարբեր երկրներից Հայաստան ժամանեցին և աղետյալներին օգնություն ցուցաբերեցին ավելի քան 400 հայ բժիշկներ, 200 գործարարներ, հասարակական գործիչներ, բարեգործական տարրեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:<sup>5</sup> Աղետից անմիջապես հետո Սփյուռքը Հայաստան առաքեց հազարավոր տոննա առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ դեղորայք, հագուստ, տնակներ, բժշկական սարքավորումներ և այլն: Արդեն 1988թ. դեկտեմբերի 10-ից նյութական օգնություն ստացվեց սփյուռքի հայկական կազմակերպություններից, որն այնուհետև պարբերաբար շարունակվեց՝ կազմելով հարյուր հազարավոր տոննաներ: Միայն ամերիկյան երկրների հայկական գաղթօջախների կողմից երկրաշարժի հետևանքները վերացնելու համար 1989թ. հավաքվեց 24 մլն դոլար, ձեռք բերվեցին և Հայաստան ուղարկվեցին առաջին անհրաժեշտության ապրանքներ: Ըստիհանուր առմամբ, Մայր հայրենիքին օգնելու նպատակով երկրաշարժից տասն ամիս անց Սփյուռքում հանգանակվեց ավելի քան 50 մլն դոլար:<sup>6</sup>

Անկախության նվաճումից հետո ստեղծվեցին նոր պայմաններ, առաջադրվեցին որակապես նոր խնդիրներ, որոնք պահանջում էին նոր մոտեցումներ: Հայաստանի Հանրապետության համար այս փուլում առավել առաջնահերթ նշանակություն ձեռք բերեցին և անհրաժեշտություն դարձան հավելյալ ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսներ գտնելու խնդիրները: Դրանց լուծման գործում էական նշանակություն ձեռք բերեց Սփյուռքը: Միաժամանակ նկատելի դարձավ մի նոր կարևոր հանգանամք, այն է՝ Սփյուռքի առանձին համայնքները լոբբիստական լայն գործունեություն ծավալեցին հօգուտ նորանկախ հայկական պետության: Այստեղ չափազանց ուսանելի է հրեաների պատմական փորձը:<sup>7</sup>

Հայրենիքում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական տեղաշարժերը, Խորհրդային Միության փլուզումը և Հայաստանի Հանրապետության անկախության հոչակումը նոր բովանդակություն և որակ հաղորդեցին Հայրենիք-Սփյուռք առն-

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 875, գ. 16, գ. 29, թ. 1:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 875, գ. 16, գ. 28, թ. 2:

<sup>7</sup> Տե՛ս «Ազգ» օրաթերթ, N 75, 19. 04. 2008:

չություններին, ինչն ընդգրկեց կյանքի բոլոր ոլորտները՝ հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային: Այդ հարաբերությունները ձերբագատվեցին գաղափարական սահմանափակումներից և արգելքներից, դարձան անկաշկանդ, բազմաբնույթ և համակողմանի: Անկախության հռչակումից հետո Սփյուռքի քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, բարեգործական ընկերություններն իրենց ակտիվ մասնակցությունը բերեցին Հայաստանում ինչպես ազգային պետականության կերտման, բանակի շինարարության, այնպես էլ հանրապետության առջև ծառացած սոցիալ-տնտեսական բազմաբարդ խնդիրների լուծմանը:

Մինչև 1991 թ. Հայաստանը ձևավորված ինդուստրիալ ագրարային երկիր էր՝ արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառների զարգացվածությամբ: Արդյունաբերական արտադրանքը կազմում էր ներքին համախառն արտադրանքի ավելի քան 50 տոկոսը: Գյուղատնտեսության բաժինը կազմում էր 20 տոկոս արտադրված ընդհանուր արտադրության ծավալի մեջ: Արդյունաբերության համար անհրաժեշտ հումքի մեծ մասը և հանրապետության էներգակիրությի գրեթե բոլոր կարիքները հոգում էին դրսից կատարվող ներկրման հաշվին:<sup>8</sup> ՀՆԱ-ի 70 տոկոսը արտադրվում էր այդ ներկրումների հաշվին: Հայաստանն իրեն ամբողջովին ապահովում էր էլեկտրաէներգիայով իր ներքին հզորության միջոցներով (40 տոկոսը Մեծամորի ատոմակայանը, 30 տոկոսը Շյուսիսային Հրազդանի կասկադը և Որոտանի կասկադն ու 17 փոքր հիդրոէլեկտրոկայանները): ԽՍՀՄ փլուզման հետևանքով խզվեցին միութենական հանրապետությունների միջև ավանդական տնտեսական կապերը, Հայաստանը զրկվեց անհրաժեշտ հումքային ռեսուրսներով ձեռնարկությունները ապահովելու հնարավորությունից:

1990 - 1992 թթ. ազգային եկամտի չափը կրճատվեց 56 տոկոսով: Հայաստանի ՀՆԱ - և 1991 թ. կրճատվեց 11 տոկոսով, 1992թ.՝ 52 տոկոսով, իսկ 1993թ.՝ 14,8 տոկոսով:<sup>9</sup> Հայաստանն ամբողջությամբ կորցրեց իր տնտեսական ներուժի 90 տոկոսը, ՀՆԱ-ն կրճատվեց 10 անգամ, արդյունաբերական արտադրանքը՝ 80 տոկոսով: 1993 թ. արդյունաբերության մեջ էներգիայի օգտագործումը կրճատվեց 44 տոկոսով, որը հանգեցրեց միայն այդ առումով ՀՆԱ-ի 15 տոկոսով կրճատմանը: Այս ամենը խոսում էր այն մասին, որ անկախության ձեռքբերումը ավելի հեշտ իրականացվեց, քան նոր քաղաքական, տնտեսական, սոցիալական բազմաբարդ խնդիրների կարգավորումը, որի առջև կանգնեց հանրապետությունը:

1990-ական թթ. սկզբներին նորանկախ Հայաստանի Հանրապետությունում ավելի խորացավ ճգնաժամը: Լեռնային Ղարաբաղի պատերազմի հետևանքով մեծապես տուժեց երկրի տնտեսությունը: Հարևան Երկրները՝ Ադրբեյջանն ու Թուրքիան շրջափակեցին կարևոր միջազգային ավտոճանապարհների և երկաթուղային գծերի մեծ մասը, որոնցից կախված էր վառելիքի և պարենի նատակարությունը Հայաստան: Երկրի վիճակը ավելի վատթարացավ Ադրբեյջանից, Լեռնային Ղարաբաղից, Գետաշենից, Մարտունաշենից, Շյուսիսային Կովկասից և

<sup>8</sup> Галжисев К. С., Геополитика Кавказа, М., 2003, стр. 125:

<sup>9</sup> Армения, проблемы независимого развития, РИСИ, М., 1998, стр. 228-229:

Արխագիայից ավելի քան 410 հազար հայ փախստականների և անօթևան մարդկանց հոսքի պատճառով:<sup>10</sup> Այդ թվում մոտ 360 հազ. հայ արտագաղթեց հարևան Աղբքեջանից, 30 հազ. փախստական՝ Լեռնային Ղարաբաղից, 18 հազ.՝ ԼՂՀ Շահումյանի հայաբնակ Վարչական շրջանից և հարակից հայաբնակ այլ վայրերից՝ Գետաշեն, Մարտունաշեն, Կամո և այլն: Բացի այդ՝ 11 հազ. հայ մեր հանրապետություն ներգաղթեց նախկին Խորհրդային տարածքի գինված հակամարտության շրջաններից՝ հիմնականում Յյուսիսային Կովկասից:

Հսկայական թվով փախստականների առկայությունն էլ ավելի բարդացրեց հանրապետության սոցիալ - տնտեսական վիճակը: Տարածաշրջանային հակամարտության արդյունքում Յայաստանում ապաստան գտած փախստականներից 35 հազարը 1994 - 1995 թթ. վերադարձան Լեռնային Ղարաբաղ, իսկ 25 հազարը մեկնեց ԱՊՀ և արտասահմանյան այլ երկրներ: <sup>11</sup> Միաժամանակ դրան զուգահեռ ընթանում էր նաև Յայաստանի ու հարակից հայկական տարածքներից հայ բնակչության արտագաղթ, որը մի շարք առարկայական ու ենթակայական պատճառներով շարունակվում է մինչ օրս: Արտագաղթը, որի ծավալները հետագայում ահազմացող չափերի հասան, երկրի սոցիալ-տնտեսական և պատերազմական ծանր պայմանների հետևանք էր: Այն միաժամանակ իրենով նշանավորեց արմատական սոցիալ-տնտեսական տեղաշարժեր՝ վլունգավոր մի շարք դրսևորումներով: Սկսվեց Սփյուռքի համալրման, ստվարացման նոր շրջափուլ:

Անվիճելի է, որ սփյուռքի գոյությունը որոշակի չափերի մեջ կարող է օգտակար լինել տվյալ ազգի համար: Սակայն այն աղետալի է դառնում, երբ սփյուռքն ավելի բազմաքանակ է և տարածված, քան հայրենիքում մնացած բնակչությունը: Առաջին հայացքից ուժեղ, հարուստ և հայաշատ Սփյուռքի գոյությունը տպավորիչ գայթակղություն է, սակայն իրականում այն ձևավորվում է հայրենիքի տկարացման, տվյալ դեպքում Յայաստանի բնակչության նվազեցման հաշվին:<sup>12</sup> Եթե խորհրդային տարիներին առավելապես բնորոշ էր հայրենադարձությունն՝ իր մի քանի փուլերով, ապա Յայաստանի անկախացումից հետո երկրում ստեղծված սոցիալ - տնտեսական ծանր վիճակի հետևանքով վտանգավոր չափերի հասավ արտագաղթը: Յայաստանի Յանրապետության և հարակից հայկական տարածքներից առայսօր շարունակվող արտագաղթն ունեցել է սոցիալական մի շարք բացասական հետևանքներ, որոնց ազդեցությունը դեռևս տևական ժամանակ իրենց գգացնել է տապալ:

Դրանցից են.

- Վերարտադրողական տարիքի բնակչության երկրից հեռանալու հետևանքով ազգային գենոֆոնի վտանգման բարձր ռիսկայնությունը,
- տղամարդկանց թվի շեշտակի նվազում, ինչը պատճառ է դառնում ամուսնությունների և աճող ընտանիքի թվի կտրուկ նվազման,
- բնակչության, այդ թվում՝ աշխատանքային տարիքի, ծերացում, երեխաների թվի նվազում, ծնելիության անկում,

<sup>10</sup> Տե՛ս «Երավունք», 18-25 ապրիլ 2002:

<sup>11</sup> Տե՛ս ՅՀՍ ֆ. 113, գ. 168, գ. 112, թ. 6:

<sup>12</sup> «Դեպի Արարատ» հայրենադարձության ազգային ծրագիրը՝ Յայաստանի զարգացման հիմնարար պայման, էջ 16:

● պաշտպանումակության և ռազմական հզրության թուլացում (այս առումով խիստ բացասական հետևանք ունի հատկապես սահմանային բնակավայրերից բնակչության ներքին և արտաքին միգրացիան), ազգային բանակ զորակոչվողների թվի նվազումը,

● մարդկային կապիտալի և որակյալ ռեսուրսների արտահոսք, որակյալ աշխատումի վերարտադրության բնական ընթացքի, աշխատանքային տարիքի սերնդափոխության շղթայի օղակների խաթարում և այլն:

Այսպիսով, ակնհայտ են արտագաղթի Հայաստանին պատճառած և պատճառելիք վնասները: Սակայն դրանք վերացնելու համար խիստ անհետաձգելի են սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման, բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացման, արտահոսքը խոչընդոտող քայլերը: Նոր զանգվածային հայրենադարձության կազմակերպման կոչերը, մեր կարծիքով, իրատեսական չեն գոնե այս պահին: Դրա վառ ապացույցը սիրիական հայրենադարձության հետ կապված բազմաբնույթ դժվարությունների առկայությունն է այսօր: Ղերևս 1995 թ. նոյեմբերի 6-ին ընդունված «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքը որոշակի հնարավորություններ էր ընծեռում մեր հայրենակիցներին՝ մասնակցելու հանրապետության պետական, հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքին:

2005 թ. նոյեմբերի 27-ին հանրաքվեով ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու նախագիծը, որի մեջ ամրագրված է երկրադարձացիությունը թույլատրող դրույթը: 2007 թ. փետրվարի 26-ին լրացվեց 1995 թ. նոյեմբերի 6-ին ընդունված ՀՀ քաղաքացիության մասին օրենքը, որի 13.1 հոդվածը սահմանեց երկրադարձացիության ինստիտուտը:<sup>13</sup>

Երկրադարձացիության ինստիտուտի ներդրումը կարևոր միջանկյալ քայլ դարձավ Սփյուռք-Հայրենիք կապերի անրապնդման և ներգաղթը բնականոն դարձնելու ճանապարհին: Այդուհանդերձ ժամանակակից Սփյուռքը, որպես գործոն, անվիճելի մեծ դեր է կատարում Հայաստանի անկախ հանրապետության սոցիալ - տնտեսական կյանքում:

Այս տեսանկյունից ևս Հայրենիք - Սփյուռքի փոխարաբերությունների համակարգման գործում ծառացան նոր և լուրջ խնդիրներ:

Փաստորեն, 1990-ական թվականների սկզբներից Հայաստան-Սփյուռք հարաբերություններում նկատելի դարձան երկու գուգահեռ գործընթացներ: Դրանցից առաջինը Սփյուռքի ֆինանսական, նյութական օգնությունն էր Հայաստանին, իսկ մյուսը՝ Հայաստանից արտագաղթի հետևանքով Սփյուռքի ստվարացումը, նրա համալրումը հայաստանյան հոն զանգվածներով: Ըստ Էռլյան, Սփյուռքից ֆինանսական դրամական փոխանցումների ծավալը ուղիղ համեմատական է հանրապետությունից արտագաղթողների քանակին: Խոսելով Սփյուռքից ստացված ֆինանսական փոխանցումների մասին՝ ղերևս հաշվարկված չէ, թե որքան միջոցներ են իրենց հետ Հայաստանից տարել արտագաղթողները: Այս հանգամանքը ևս լուրջ մտորելու տեղիք է տալիս:

Սփյուռքը, փաստորեն, դարձավ ոչ միայն Հայաստանում սոցիալական դժվարին խնդիրների լուծման աջակիցն ու ֆինանսական, նյութական միջոցների նե-

<sup>13</sup>Տե՛ս «Քաղաքացիության մասին» օրենք, հոդված 13., [www.arlis.am](http://www.arlis.am).

րարկողը, այլև Հայաստանում սոցիալական լարվածության պարպման, երկրում գործազրկության աճի հետևանքով գոյացած գերիհագեցած աշխատանքային շուկայի և աշխատութիւնի ավելացած ռեսուրսների կանոնան միջավայր: Զևսվորվեց Նոր սփյուռքը, որը գնաց ոչ միայն կիսելու Դին սփյուռքի ճակատագիրը, այլև նոր բովանդակություն և շունչ հաղորդեց Հայրենիք- Սփյուռք հարաբերություններին: Զարթոնք ապրող և համալրված սփյուռքահայ համայնքները դարձան արտագործած հայերի համար ոչ միայն արտերկրություն արագործեն ինտեգրվելու նպաստավոր օջախներ, այլև վերածվեցին Հայաստանում բնակուղություն բազմաթիվ ընտանիքների ֆինանսական և նյութական այլ միջոցներով ապահովող օղակներ: Ներկայումս արտերկրություն ապրող հայերը 2 անգամ գերազանցուն են Հայաստանում բնակուղներին: Թե «հին» և թե «նոր» սփյուռքն ամուր կապեր հաստատեց Հայաստանի հետ: Արտերկրից ստացվող աշխատանքային եկանութներն ապահովում են Հայաստանի բնակչությանը զգալի ֆինանսական աջակցություն: Դրանք Հայաստանում տնտեսական աճի և աղքատության կրծատման աղբյուր են: Հայաստանը զբաղեցնում է առաջին տեղերից մեկը ՀՆԱ-ի նկատմամբ դրամական փոխանցումների հարաբերակցության տեսանկյունից. դրանք կազմում են ՀՆԱ-ի ավելի քան 10 տոկոսը: Համաձայն պաշտոնական վիճակագրության՝ Հայաստանում դրամական փոխանցումների ծավալն հասել է 1 միլիարդ ԱՄՆ դոլարի: Այլ գնահատականներով դրանք ավելի բարձր են (1.7 մլրդ. ԱՄՆ դոլար):<sup>14</sup>

Հայաստանի նորանկախ հանրապետության տնտեսական աջակցության սոցիալական խնդիրների լուծման գործում բացառիկ է «Հայաստան» հիմնադրամի դերը, որի ֆինանսական ներարկումների մեջ նաև կատարվում է Սփյուռքի կողմից: Հայկական պետականության կայացման ու զորացման գործին համայն հայության ուժերի ու կարողությունների համախումբ գործադրման նպատակով<sup>15</sup> 1992 թ. մարտի 3-ին ՀՀ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հրամանագիր ստորագրեց ««Հայաստան» համահայկական հիմնադրամ հիմնելու մասին»: Հիմնադրամը հիմնվում է 1992 թ. մայիսի 15-ին: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի առաջին նիստում հաստատվեցին համապետական նշանակության տնտեսական, գիտամշակութային և սոցիալական հետևյալ ծրագրերը՝ «Զանգեգուր», «Աղետի գոտի», «Արցախ», «Բռնագաղթվածներ», «Գիտամշակութային և սոցիալական» ծրագրեր։<sup>16</sup>

1993 թ. Հիմնադրամն արդեն սկսել էր ծրագրեր իրականացնել Գյումրի, Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան քաղաքներում՝ առաջին հերթին իրականացնելով անվարտ բնակելի շենքերի կառուցման աշխատանքներ: Շինարարական աշխատանքները կատարվում էին հիմնականում Գյումրիի «Անի» («Անին» Գյումրիի ամենամեծ քաղամասներից էր, ուր բնակեցվել և բնակեցվում էին 1988 թ. երկրաշարժից տուժած գյումրեցի ընտանիքներ), Վանաձորի «Տարոն 3», Սպիտակի «Խտալական» թաղամասներում և Ստեփանավան քաղաքում: 1993-

<sup>14</sup> Արտերկրից միգրանտների փոխանցումները և աղքատությունը Հայաստանում, Ասիական զարգացման բանկ, Երևան, 2007, էջ 9:

<sup>15</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 168, գ. 112, թ. 6:

<sup>16</sup> Տե՛ս Ք. Ռ. Պետրոսյան, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001թթ., Երևան, 2011, էջ 66:

2000թթ. ընթացքում ծրագրի շրջանակներում կատարվեց մոտ 8 մլն ԱՄՆ դոլարի շինարարություն:<sup>17</sup> 1992-1993 թթ. խստաշունչ ծմբեր հաշվի առնելով՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը և Հայկական միացյալ Ֆոնդը 1993 թ. ձեռնարկեցին համաշխարհային դրամահավաք՝ վառելանյութ ձեռք բերելու համար: Մեկ շաբաթում հանգանակվեց 7 մլն դոլար, որը եռապատկվեց ամերիկահայ ազգային բարերար, Հիմնադրամի պատվո անդամ Քըրք Քըրքորյանի կողմից՝ հասցնելով 21 մլն դոլարի:<sup>18</sup>

Հիմնադրամի սոցիալական նշանակության ծրագրերից էր նաև Արագածոտնի մարզի Թալինի շրջանի 22 ջրագուրկ գյուղերի ջրատարի շինարարությունը, որը նպատակային ձևով ֆինանսավորեց «Ռոբերտ Բողոսյան և որդիներ» հիմնադրամը: Ծվեյցարահայ Ռոբերտ Բողոսյանը, իր որդիներ Ալբերտ և Ժան Բողոսյանների հետ, 1995-2001 թթ. Հիմնադրամի միջոցով հայրենիքում իրականացրել է շուրջ 2 մլն ԱՄՆ դոլարի ծրագրեր:<sup>19</sup>

Ֆրանսիայի հայ համայնքը, Ծվեյցարահայի «Ռ. Բողոսյան և որդիներ» և «Իզմիրյան» հիմնադրամները, ԱՄՆ-ի «Բժշկական օգնություն հայերին» կազմակերպությունը, արգենտինահայեր Արմեն Եքսերճյանը և Սանվել Սարկոսյանը նպատակային ձևով ֆինանսավորեցին Երևանի թիվ 1 մանկական կինհիկական հիվանդանոցի վերակենդանացման և վիրաբուժության բաժանմունքների վերակառուցման, կահավորման ու ժամանակակից բուժտեխնիկայով հագեցման ծրագրերը:<sup>20</sup>

1996 թ. մարտ - մայիս ամիսներին անցկացվեց «Ստեփանակերտ - Երևան - Լու Ազգելես» Ազգային տուրքի մարաթոնը: Մարաթոնի ընթացքում հանգանակվեց ավելի քան 6 մլն ամերիկյան դոլար: Լինսի հիմնադրամը իր խոստնան համաձայն կրկնապատկեց մայիսի 27-ի հեռուստամարաթոնի արդյունքում գանձված գումարը: Հեռուստամարաթոնի նպատակային մուտքերն ամբողջությամբ ուղղվեցին «Գորիս - Ստեփանակերտ» ավտոճանապարհի շինարարությանը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Հյուսիս - հարավ» ավտոճանապարհու շինարարության ծրագրը մեկնարկեց 2000 թ. հունիսին:

«Հյուսիս - հարավ» ավտոճայուղու շինարարության ծրագրին Քըրք Քըրքորյանը հատկացրեց 1 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀԲԸՍ Լուիզ Սանուկյան Սիմոնը՝ 700 հազար դոլար: 1999 թ. հեռուստամարաթոնի նվիրատուներից էին նաև Հրայր և Վահագն Հովհանները, Ալբերտ Բոյաջյանը, Հրազ Գաբրիելյանը, Քերոլայն Մուգարը:

Որպես կայացած համահայկական կառույց «Հայաստան» հիմնադրամը 1999թ. դրությամբ շուրջ 67 մլն ծրագրեր իրականացրեց Հայաստանի Հանրապետության մարզերում և ԼՂ շրջաններում:<sup>21</sup> Ութ տարիների (1992- 2000թթ.) ըն-

<sup>17</sup> Տե՛ս «Հիմնադրամ», ապրիլ 2000թ.:

<sup>18</sup> Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 1992-1995թթ. գործունեությունը և ֆինանսական հաշվետվություն, Երևան, 1995, էջ 24:

<sup>19</sup> Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, Ֆրանսիական ծրագրային հաշվետվություն, Երևան, 2001, էջ 21:

<sup>20</sup> Տե՛ս «Հիմնադրամ», ապրիլ 2000թ.:

<sup>21</sup> Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 1999, էջ 5:

թացքում հիմնադրամն իրականացրեց Երեք տասնյակից ավելի նպատակային ծրագրեր:

Գիտական, մշակութային, կրթական ոլորտները ևս գտնվում էին սփյուռքահայ բարերարների ուշադրության կենտրոնում: Այդ նպատակով Գալուստ Կյուլպելյան բարեսիրական և գիտամշակութային հիմնարկությունը հիշյալ բնագավառներին տրամադրում է գումարներ: Յայաստանի Յանրապետությանը ցուցաբերվող օժանդակությունը 1988 թ. Սպիտակի Երկրաշարժից ի վեր հատկացվումն էր առավելապես բժշակական արդիական սարքավորումների և դեղորայքի ձեռքբերման համար: Զգալի գումարներ տրամադրվեցին Մատենադարանին, ՀՀ ԳԱԱ հիմնակազմ գրադարանին, Ազգային գրադարանին և ԵՊՀ -ին: Այդ հաստատության վարչական ժողովը որոշում ընդունեց, որ Յայաստանը, բացի ամենամյա 450 հազար դոլարից, լրացուցիչ ստանալու է ևս կես մեջ դոլար՝ որպես արտակարգ օգնություն աղետի գրտում:<sup>22</sup>

«Գիտական օժանդակություն ծրագրերի» շրջանակներում ծառայությունը նախապատվություն էր տալիս Յայաստանին: ՀՀ-ի գիտական տարբեր հաստատություններում աշխատող գիտականներին արտագաղթից հետ պահելու, հայրենիքում նրանց գիտական հետազոտությունները խրախուսելու նպատակով ԳԿՀ-ն 113, 250 դոլարով կրթաթոշակներ հատկացրեց ԵՊՀ -ի 158 և ԳԱԱ -ի 27 գիտնականների:<sup>23</sup>

Լու Անջելեսում 1989 թ. հիմնադրված Միացյալ հայկական ֆոնդը ամերիկահայ հայտնի հասարակական գործիչ Յարութ Սասունյանի նախաձեռնությամբ 1992-1993 թթ. ձմռանը 400 հազար դոլարի մեծաքանակ օգնություն առաքեց Յայաստան: Նույն ժամանակահատվածում նրա ջանքերով Եվրոպայից և ԱՄՄ-ից Յայաստան էր հասնում ամիսը միջին հաշվով 40 տոննա օգնություն:

Բարեգործական-մարդասիրական մեծ աջակցություն ցուցաբերվեց «Լինս»-ի հիմնադրամի կողմից, որը հիմնել էր նշանավոր ազգային բարերար Քըրք Քըրքորյանը: Միայն Քըրք Քըրքորյանը Յայաստանի արդյունաբերության և ձեռներցության հիմնադրամին տրամադրեց 100 մեջ դոլարի վարկ: Դա անկախ Յայաստանի տնտեսության մասնավոր հատվածում կատարվող ամենախոշոր ներդրումն էր, որի նպատակն էր ստեղծել աշխատատեղեր, մեղմացնել աղքատությունը, զարկ տալ ՀՀ-ի տնտեսությանը: 2003 թ. «Լինս»-ի հիմնադրամը 2999,1 մեջ դրամ արժողությամբ իրականացրեց 380 բնակարանների շինարարություն Սպիտակ քաղաքում: Նույն տարում 2672.5 մեջ դրամ հատկացրեց Եղևան - Դիլջան 45 կմ և 1440.0 մեջ դրամ՝ Գետաշեն - Ուկեպար - Բաղանիս ճանապարհների նորոգմանը:

1993-1998թթ. «Յովիարու Կարագոյան» մանկական հիմնադրամը ՀՀ-ում բացել է ամենաարդիական սարքավորումներով հագեցած մանկական 5 կլինիկա, իսկ 1991-1999թթ. այստեղ կատարել է 2,5 մեջ դոլարի ներդրում: Յաստատության ատամնաբուժարաններում տարեկան բուժվում էր 20 հազար, իսկ ակ-

<sup>22</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 164, գ. 143, թ. 12:

<sup>23</sup> Տե՛ս Դարախսանյան Վ., «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայկական համայնքների ծառայության բաժաննունիքի գործունեությունը 1995-1998թթ., «Բամբեր Յայաստանի արխիվների», Երևան, 2005, N /106/, էջ 169:

Նաբուժարաններում 3 հազար երեխա: Արժանահիշատակ է նաև «Հայաստանի մանկատների հիմնադրամ» կազմակերպության գործունեությունը, որը տարին 2 անգամ՝ աշնանը և գարնանը կազմակերպում է դրամարաշխում մանկատներին և ծերանոցներին, զոհված և վիրավոր ազատամարտիկների երեխաներին, աղետի գոտու կարիքավոր ընտանիքներին: Մեծ է նաև սփյուռքահայ անհատ բարերարների նվիրատվությունների և բարեգործական միջոցառումներ Նշանակությունը: Այսպես, Արմավիրի մարզի Պտղունք համայնքին բարերարներ Զոհրաբ և Սեդա Ղազարյանների տրամադրած 2 մլն 500 հազ. դրամով 2004 թ. մասնակիորեն վերանորոգվել է մանկապարտեզը և ձեռք է բերվել գույք: 2003-2004 թթ. ամերիկահայ բարերարներ Զվարթ և Յովսեփ Ուզումյանների կողմից հովանավորվել է Աջափնյակ համայնքի թիվ 278 մասուր - մանկապարտեզը՝ կապիտալ վերանորոգման, կահավորման, կոշտ և փափուկ գույքի ձեռքբերման համար:

ՀՅ սոցիալ-տնտեսական ծանրագույն ժամանակահատվածում հիմնադրամները և անհատ բարերարները բացառիկ դեր ունեցան պետության և բնակչության բազմաբնույթ և լայնածավալ օգնություն ցուցաբերելու հարցում, որից դուրս չմնաց հասարակության որևէ շերտ: Առանց այդ օգնության սոցիալ - տնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարումը կլիներ շատ ավելի ծանր: Սփյուռքի նկատմամբ պետական քաղաքականության իրականացման նապատակով 2008 թ. սեպտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունեց «ՀՅ Սփյուռքի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու ՀՅ Սփյուռքի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու նասին որոշում:<sup>24</sup> Օրենսդրական համապատասխան դաշտի առկայությունը, նորաստեղծ Սփյուռքի նախարարությունը Հայրենիք - Սփյուռք հարաբերությունները դարձրեցին ավելի առարկայական և համակարգված:

Այդուհանդերձ Սփյուռք-Հայաստան փոխհարաբերությունների կանոնակարգման համար անհրաժեշտ են հետևյալ քայլերը:

- Բոլոր հնարավոր միջոցներով անհապաղ կասեցնել արտագաղթը Հայաստանից,
- Հաշվառել և ստեղծել սփյուռքահայ բոլոր համայնքների վերաբերյալ տվյալների և տեղեկատվական բանկ,
- Յուրաքանչյուր հյուրընկալող երկրի առանձնահատկություններին համապատասխան նշակել տվյալ սփյուռքահայ համայնքին հայապահպանության գործում աջակցելու ծրագիր,
- Երկրադարձիության ինստիտուտի ներդրման ակտիվացման ճանապարհով նպաստել սփյուռքահայերի կողմից Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքին լիարժեք մասնակցությանը,
- Հայաստանում բարենպաստ միջավայր ստեղծել սփյուռքահայ ներդրողների համար առավել հեռանկարային և անհրաժեշտ ուղղություններում,
- Վերոհիշյալ խնդիրները համակարգելու նպատակով ստեղծել համահայկական ֆինանսական բանկ:

<sup>24</sup> www.Arlis.am, որոշում, N 1049-Ն:

## ԱՊԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀԱՍ, ֆ. 113, գ. 164, զ. 143:.
2. ՀԱՍ, ֆ. 281, գ. 409, զ. 29:.
3. ՀԱՍ, ֆ. 875, գ. 16, զ. 29:.
4. ՀԱՍ, ֆ. 875, գ. 16, զ. 28:.
5. ՀԱՍ, ֆ. 113, գ. 168, զ. 112:.
6. «Հիմնադրամ», ապրիլ, 2000:
7. «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 1992-1995 թթ. գործունեությունը և ֆինանսական հաշվետվությունը, Երևան, 1995:
8. «Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆրանսիական ժրագրային հաշվետվություն, Երևան, 2001:
9. «Քաղաքացիության մասին» օրենք, հոդված 13.1, [www.arlis.am](http://www.arlis.am).
10. Դալլարյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն, Երևան, 2004:
11. Պետրոսյան Ք., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001թթ., Երևան, 2011:
12. Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985:
13. Արտերկրից միգրանտների փոխանցումները և աղքատությունը Հայաստանում, Ասիական գարգանցման բանկ, Երևան, 2007:
14. Армения, проблемы независимого развития, РИСИ, М., 1998.
15. Гаджиев К. С., Геополитика Кавказа, М., 2003.
16. «Քանրեր Հայաստանի արխիվների», N2 (106), Երևան, 2005:
17. «Դեպի Արարատ» հայրենադարձության ազգային ժրագիրը՝ Հայաստանի զարգացման հիմնարար պայման. Եզերը մատենաշար, թիվ 1, էջ 11, Երևան, 2006:
18. «Ազգ», օրաթեր, N 75, 19.04.2008:
19. «Իրավունք», 18-25 ապրիլ 2005:

## СОЦИАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ АРМЕНИИ-ДИАСПОРЫ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ ОТНОШЕНИЙ

**Э. Л. ЗОГРАБЯН**

Статья посвящена взаимоотношениям Республики Армении и Армянской диаспоры, имеющим важное актуальное значение.

В ней обсуждаются некоторые аспекты, касающиеся социальных вопросов в Армении, и роли Армянской диаспоры в решении этих вопросов. Освещаются примеры социального сотрудничества, делаются практические предложения.

## SOCIAL PROBLEMS IN THE CONTEXT OF MODERN INTERRELATIONS OF ARMENIA AND DAISPORA

**E. L. ZOHRABYAN**

The article is devoted to a key question of great up-to date importance. It touches upon the new character of mutual relations between the republic of Armenia.

Several questions have been put on the social key problems in Armenia and the role of diaspora in solving them. Several examples are illustrated on the role of diaspora of social cooperation. Practical offers have been made.